ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանուն	Արամ Ղազարյան
2. Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ Լոռու մարզպետ
3. Գործուղման վայրը և ժամկետները	Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Շամոնի) (12.09.2024-16.09.2024)
4. Հրավիրող կողմը	«Մտքերի գագաթնաժողովի» հիմնադիր՝ Թիերի Մալըրե

5. Գործուղման նպատակները «Մտքերի գագաթնաժողովը» (Summit of Minds) Ֆրանսիայի Շամոնի քաղաքում ամեն տարի անցկացվող հեղինակավոր միջոցառում է, որը համախմբում է քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային և գործարար շրջանակների հայտնի անձանց աշխարհի տարբեր երկրներից:

Այս ձևաչափով հանդիպումները գաղափարների, գիտելիքների ու փորձառության փոխանակման, կապերի ստեղծման և ներդրումային ծրագրերի շուրջ համագործակցության հաստատման յուրատեսակ հարթակ է, որի հիմնական նպատակն է համաշխարհային առումով կարևոր հարցերի վերաբերյալ նոր գաղափարների ներկայացումը և դրանց գործնական կիրառման համար գործարար ներուժի համախմբումը:

6. Քննարկված թեմաները Համաժողովի շրջանակներում քննարկումներ են եղել սոցիալական նորարարությունների, տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, հատկապես՝ «կանաչ» էներգիայի զարգացման, վերականգնվող գյուղատնտեսության (նորարարական լուծումներով ջրի և այլ ռեսուրսների նվազագույն օգտագործմամբ հողերի մշակում և հողերի դեգրադացման կանխում) և կայուն զարգացման թեմաներով: Կից ներկայացվում է հանդիպման ծրագիրը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը Շամոնի այցի շրջանակներում հանդիպումներ է ունեցել անհատ ներդրողների, խոշոր ներդրումային հիմնադրամների ներկայացուցիչների հետ՝ քննարկելով Լոռու մարզի զարգացման ծրագրերում նրանց մասնակցության և ներդրումների հնարավորությունները: Մասնավորապես երկկողմ հանդիպումներ են եղել՝

- ✓ Գագաթնաժողովի հիմնադիր և կազմակերպիչ Թիերի Մալըրեի հետ. քննարկվել են կազմակերպության ցանցում ներառված մասնագետերին մարզի կարիքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու և նրանց փորձագիտական խորհրդատվությունը և ներդրումային ներուժը օգտագործելու, ինչպես նաև Լոռու մարզում մտքերի գագաթնաժողովի հանդիպումը կազմակերպելու հնարավորությունը
- ✓ Միջազգային հեղինակավոր ժուռնալիստ (BBC և այլն) Նիկ Գովինգ հետ. քննարկվել է Լոռու մարզում մտքերի գագաթնաժողովի հանդիպումը կազմակերպելու դեպքում Հայաստան այցելության հնարավորությունը
- ✓ Գուգլ ընկերության նախկին ավագ գործադիր պաշտոնյա, բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ամերիկյան գործարար Թեդ Սուդերի հետ. քննարկվել են Հայաստան այցելության և Լոռու մարզին բարձր տեխնոլոգիաերի ոլորտում աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները
- ✓ Շվեյցարական սննդամթերքի արդյունաբերության ոլորտում առաջատար կազմակերպության տնօրեն Ջակոմո Կատանեոի հետ. պատրաստակամություն է հայտնել Լոռու մարզում սննդի ոլորտում նորաստեղծ ձեռնարկատիրական նախաձեռնություններին գիտելիքների և ֆինանասական աջակցություն ցուցաբերելու հարցում:
- ✓ Գլոբալ ագրիֆուդ ալիանս կազմակերպության գործադիր տնօրեն Ջեոաննա Գորդոնի հետ. նախնական պատարաստակամություն է հայտնել օժանադակություն ցուցաբերել մարզում գյուղատնտեսական մթերքների արտադրության քաղաքականության մշակման հարցում և համագործակցության հնարավորություններ ստեղծել իր կազմակերպության ցանցում գործող ձեռնարկությունների հետ
- ✓ Եվրոպական խորհրդարանի անդամ Ջյութա Պաուլուսի հետ. քննարկվել է Լոռու մարզում մտքերի գագաթնաժողովի հանդիպումը կազմակերպելու դեպքում Հայատան այցելության հարցը
- ✓ Մի շարք հեղինակավոր կազմակերպություններում քաղաքական և բիզնես հարցերով գլխավոր խորհրդատու Սեյջի Ինադայի (Ճապոնիա) հետ. քննարկվել են Լոռու մարզի զարգացմանն ուղղված հնարավոր համագործակցության ուղղությունները:

Միջոցառման ընթացքում պարբերաբար ցուցադրվել է կարճատև տեսաֆիլմ Լոռու մարզի զբոսաշրջային գրավչության և տնտեսական զարգացման հնարավորությունների մասին:
Լոռու և մարզի և մարզում իրականացվող տնտեսական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական նյութեր են տրամադրվել նաև երկկողմ հանդիպումների ընթացքում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում «Մտքերի գագաթնաժողովի» (Summit of Minds) հերթական հանդիպումներից մեկը Լոռու մարզում անցկացնելու մասին՝ հայկական կողմից վերջնական որոշում ընդունելու դեպքում:

Նման հեղինակավոր միջոցառման անցկացումը Լոռու մարզում կամրապնդի Հայաստանի միջազգային դրական իմիջը և հնարավորություն կտա օտարերկրյա ներդրողների և միջազգային

գործընկերների համար բացահայտել մարզի ուժեղ կողմերն ու հնարավորությունները և ներգրավել ֆինանսական միջոցներ մարզի տարածքային զարգացման ուրույն մոդել մշակելու համար:

Միջոցառումը պարբերական հիմունքերով Հայաստանում կազմակերպելու որոշում կայացնելու դեպքում՝ կարող է դիտարկվել ֆրանսիական «Summit of minds»-ի հիմնադիրների, ինչպես նաև այլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ այն կազմակերպելու հնարավորությունը՝ արդեն հայկական նոր բրենդի ներքո:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Հաշվի առնելով մտքերի գագաթնաժողովի ցանցի գործարար ներուժը և ՀՀ Լոռու մարզի համար այն օգտագործելու կարևորությունը, ինչպես նաև միջոցառման ղեկավարության և անդամների պատրաստակամությունը աջակցելու Լոռու մարզի զարգացմանը՝ առաջարկում եմ քննարկել 2025 թվականի մայիս/հունիս ամիսների ընթացքում մարզում այլ միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ կազմակերպել համաժողով:

Երկկողմ հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին ընթացք տալու նպատակով Լոռու մարզի զարգացման ներդրումային ծրագրերի փաթեթները տրամադրել գործընկերներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

18.09.2024թ.